## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվար 2021 ԹՎԱԿԱՆԻ N 5

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է

Հաստատել համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 29-ի թիվ 2 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Համայքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը 2021թվականի համար սահմանելու մասին ։
2. Համայնքի ավագանու 2021թվականի հերթական նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:
3. Համայնքում 2021թվականի ընթացքում նոր ծնված երեխայի ընտանիքին դրամական օգնություն տալու մասին:
4. Կամարիս համայնքի 2021թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
5. Համայնքի 2021թվականի սուբվենցիայի ծրագրին մասնակցության մասին:
6. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
7. Հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին:
8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
9. Ֆինասական աջակցություն ցուցաբերելու մասին:

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՔԱՐՋԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 29>> հունվար .2021թվականի N 6-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,

համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել 2021 թվականի բյուջետային տարվա համար համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման հետևյալ կարգը

1) սոցիալապես անապահով խավերի և պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման նպատակով.

ա. մինչև 50000 (հիսուն հազար) դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 50000 (հիսուն հազար) դրամ գումարից ավելի ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում.

2. Համայնքում պաշտպանության կազմակերպման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, տրանսպորտի, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, ֆիզիկականկուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական ծառայության, գյուղատնտեսության բնագավառներում կամավոր լիազորություններն իրականացնել 2021 թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին

ա. մինչև 2000000 (երկու միլիոն) դրամ ծախս պահանջող աշխատանքների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 2000000(երկու միլիոն) դրամից ավել ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՋԱՐՋԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

Ո Ր Ո Շ Ու Մ

»29_» ՀՈՒՆՎԱՐԻ .2021ԹՎԱԿԱՆԻ N 7-Ա

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով

համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետությա Կոտայքի մարզի Կամարիս համայնքի ավագանու 2021թվականի հերթական նիստերի ժամանակացույցը համաձայն հավելվածի:

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Կամարիս համայնքի ավագանու
2021թ.հունվարի 29-ի նո. 7-Ա որոշումը

# Ավագանու նիստերի ժամանակացույց

| Ամիսը | Համայնքի ավագանու նիստի օրը | Համայնքի ավագանու նիստի օրակարգային հարցեր | |
|---|---|---|---|
| Հունվար | մինչև 15-ը | համայնքի բյուջեի 4-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| | ամսվա վերջ մինչև 30-ը | համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին | |
| | | համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին | |
| Մարտ | մինչև 15-ը | համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն | |
| Ապրիլ | մինչև 15-ը | համայնքի բյուջեի 1-ին եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| | | հանրությանը ներկայացվող հաշվետվության քննարկում | |
| Հունիս | ամսվա 2-րդ կեսը | համաձայնություն հողային հաշվեկշռին | |
| Հուլիս | մինչև 15-ը | բյուջեի 2-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Օգոստոս | ամսվա 2-րդ օրը | համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման մասին | |
| Հոկտեմբեր | մինչև 15-ը | համայնքի բյուջեի 3-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Դեկտեմբեր | Մինչև ամսվա 3-րդ շաբաթը | տեղական հարկերի, տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին | |
| | | համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին | |
| | | համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին | |
| | | Հաջորդ տարվա բյուջեի հաստատում | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57


# Ո Ր Ո Շ Ու Մ

29-ը Հունվարի 2021 թվականի N 8-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՈՐ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին"օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին որոշում է

1.Կամարիս համայնքում 2021թվականի ընթացքում նոր ծնված երեխայի ընտանիքին համայնքի բյուջեում նախատեսել և տալ 40,000/քառասուն հազար/ ՀՀ դրամ գումար որպես օգնություն:

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ Ու Մ

»_29_» ՀՈՒՆՎԱՐԻ .2021 ԹՎԱԿԱՆԻ N 9-Ն

## ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Կոտայքի մարզի Կամարիս համայնքի 2021թվականի տարեկան աշխատանքային պլանը, համաձայն հավելվածի;

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հունվարի 2021ԹՎԱԿԱՆԻ N 10-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Համայնքի ավագանին որոշում է.*

Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության պետ բյուջեից 2021թվականին սուբվենցիայի տրամադրման ծրագրին համայնքի մասնակցությանը:

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՋԱՐՋԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հունվարի 2021ԹՎԱԿԱՆԻ N 11-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1.Քաղաքացի Գեորգի Սարկիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կամարիս համայնքի Դեմեր հանդամասի թիվ 1 07-035-0161-0029 կադաստրային համարի արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, գյուղատնտեսական արտադրական 1.0 հա մակերեսով հողամասը փոխել բնակավայրի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման օբյեկտների գործառնական նշանակության:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

# Ո Ր Ո Շ Ու Մ

«29» հունվարի 2021ԹՎԱԿԱՆԻ N 12-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1 ին մասի 29, 42-րդ կետով, <<Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետությա օրենքի $14^3$-րդ հոդվածի 5-րդ, Հայաստանի Հանրապետության Կառավարությա առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի 2018 թվականին հաստատված գլխավոր հատակագիծը, ավագանին որոշում է

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և հիմք ընդունելո գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները, Կամարիս համայնք վարչական տարածքում գտնվող սխալմամբ որպես <<անհայտ>> քաղաքացու սեփականություն փոխանցված /կադաստրային ծածկագիր 07-035-0130-0134/ 0.1599հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը, / ճանաչել որպես համայնքայի սեփականություն և ներկայացնել պետական գրանցման:

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ՋԱՐՋԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«29» հունվարի 2021թվականի N 13**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Հավանություն տալով ,,ՌՈՔ ԲԵՐԻ,, ՍՊԸ –ի տնօրեն Բորիս Ղազարյանի դիմումին՝ ուղղակի վաճառքով ,,ՌՈՔ ԲԵՐԻ,, ՍՊԸ –ին 190000/մեկ հարյուր իննիսուն հազար/ դրամ արժեքով օտարել Կամարիսի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 07-035 -0130-0134 կադաստրային ծածկագրով 0.1599 հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի ջրովի վարելահողը:

2. Կամարիս համայնքի վարչական տարածքում գտնվող 07-035-0130-0134 կադաստրային ծածկագրով 0.1599հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը օտարվում է ,,ՌՈՔ ԲԵՐԻ ,, ՍՊԸ-ին իրեն սեփականության իրավունքով պատկանող 07-035-0130-0146 կադաստրային ծածկագրով 0.6314հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը ընդլայնելու և օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

3.Վերը նշված հողամասը օտարվում է ուղղակի վաճառքով, քանի որ նշված հողամասն անհնար է որպես առանձին միավոր աճուրդային կարգով օտարել Կամարիս համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից փոքր լինելու պատճառով:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ (6)** **Դեմ 0** **Ձեռնպահ 0**

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Կամարիս համայնք,, հեռախոս, 0222-6-77-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2021թվականի N 14

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով, հիմք ընդունելով Կամարիս համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 29-ի թիվ 6-Ն որոշմամբ հաստատված բյուջեն՝ սոց.արտոնություն բաժին 10 խումբ 7 դաս 1 4729 հոդվածը. համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացվող և համայնքի սոցիալական օգնության գործնեություն կազմակերպող հանձնաժողովի եզրակացությունը Կամարիս համայնքի բնակիչ Լուսինե Ժորայի Սահակյանի ընտանիքին հատկացնել 300.0/երեք հարյուր հազար/ դրամ անհատույց դրամական օգնություն , համննայքի բյուջեի համապատասխան բաժին 10 խումբ 7 դաս 1 4729 հոդվածից :

Կողմ (6) Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆՈՔՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱՐԶԱՆԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳՆԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ